

## Տեղեկատվություն

Մեկնարկել են ՀՀ ԳԱԱ համակարգի աշխատողների համար նախատեսված բազմաբնակարան բնակելի շենքի շինարարական աշխատանքները:

Կկառուցվեն երկու, երեք և չորս սենյականոց ներքին հարդարամաք 164 բնակարաններ, ստորգետնյա ավտոկայանատեղեր, հասարակական նշանակության տարածքներ, ամբողջությամբ բարեկարգված տարածք, ստեղծվելու են նոր կոմունիկացիոն համակարգեր, մանկական խաղահրապարակ:

Բնակելի շենքի շինարարությունը մեկնարկել է 2019թ. հուլիսի 1-ին, և ավարտը նախատեսվում է 2022թ. հուլիսի 1-ին:

Բնակարանի 1 քմ. արժեքը սահմանվել է 275.000 ՀՀ դրամ:

### **Բնակարանները շահառուներին հանձնվելու են ներքին հարդարամաք.**

- բնակարանի ներքին բաժանումներն իրականացվելու են բնակելի շինության ճարտարապետական գլխավոր նախագծի համաձայն,
- բնակարանի հատակը՝ լամինատե (կատարվելու է վաճառողի կողմից առաջարկվող տարբերակներից՝ շահառուի ընտրությամբ),
- սանհանգույցի հատակը և պատերը՝ սալիկապատված (կատարվելու է վաճառողի կողմից առաջարկվող տարբերակներից՝ շահառուի ընտրությամբ),
- մուտքի դուռը՝ երկաթյա,
- միջսենյակային դռների տեսակը՝ ՄԴՖ (կատարվելու է վաճառողի կողմից առաջարկվող տարբերակներից՝ շահառուի ընտրությամբ),
- պատուհանները՝ մետաղապլաստե,
- էլեկտրականության մոնտաժն իրականացվելու է բնակելի շինության էլեկտրամատակարարման աշխատանքային նախագծի համաձայն,
- էլեկտրական հանգույցները՝ տեղադրված,
- ջեռուցման համակարգի մոնտաժը՝ կատարված, առանց սարքավորումների,
- շենքը՝ գազիֆիկացված:

Ձեռքբերվող բնակարանի արժեքի վճարման համար սահմանվում է հետևյալ կարգը.

Շահառուն պարտավորվում է վիճակահանությունից հետո բնակարանի ամբողջ արժեքի 30 %-ի չափով կանխավճար կատարել, իսկ բնակարանի արժեքի 70 %-ը վճարել՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի (տոկոսները հաշվարկված են բնակարանի ամբողջական արժեքից).

- առաջին միջանկյալ վճարում՝ պայմանագիրը կնքելուց հետո 8 ամիս անց՝ 15 %,
- երկրորդ միջանկյալ վճարում՝ պայմանագիրը կնքելուց հետո 16 ամիս անց՝ 15 %,
- երրորդ միջանկյալ վճարում՝ պայմանագիրը կնքելուց հետո 24 ամիս անց՝ 30 %,

- չորրորդ ավարտական վճարում՝ բնակարանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելու մասին ծանուցում ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում՝ 10 %-ի չափով:

### **Բնակարանների հատկացման կարգը.**

- ՀՀ ԳԱԱ կազմակերպություններին բնակարանները հատկացվում են ըստ քվոտաների: Քվոտաները ձևավորվում են ըստ տվյալ կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի: Բացառություն է կազմում միայն ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շենքը կառուցվում է ինստիտուտի կողմից տրամադրված տարածքում:
- ՀՀ ԳԱԱ կազմակերպությունների տնօրինությունը քննարկում է հատկացված բնակարանների հարցը և ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամին» է ներկայացնում հնարավոր շահառուների ցուցակը՝ ըստ բնակարանի տեսակի (2, 3 կամ 4 սենյականոց): Ցուցակին կցվում են բոլոր շահառուների կողմից լրացված հարցաթերթիկները: Ցուցակը շարադրվում է ըստ առաջնահերթությունների: Առաջնահերթության որոշման կարգը և չափորոշիչները սահմանում է կազմակերպության ղեկավարությունը: Դա կարող է լինել տնօրինության որոշում, կոլեգիալ մարմնի կամ, օրինակ, գիտական խորհրդի որոշում: Հաստատված ցուցակը ներկայացվում է ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամ»-ին: Օրինակ՝ կազմակերպությանը հատկացված է 2 հատ երկու սենյականոց բնակարան, բայց կազմակերպությունում կա նման բնակարանի հավակնորդ 5 շահառու: Այդ դեպքում ներկայացվում են բոլոր հինգ շահառուների անունները, սակայն վիճակահանությանը մասնակցում են առաջին երկու շահառուները: Հաջորդ փուլերում առաջին երկուսից որևէ մեկի հրաժարվելու դեպքում բնակարանը հատկացվում է երրորդ համարի շահառուին:
- Շահառուների հետ կնքվող գնման իրավունքի պայմանագրում հատուկ նշվում է հետևյալ պայմանը. մինչև շենքի ավարտը և բնակարանի սեփականության պետական գրանցումը շահառուն իրավունք չունի վաճառել իր բնակարանը: Շահառուի կողմից բնակարանից հրաժարվելու կամ պայմանագրում նշված պահանջները խախտելու դեպքում բնակարանը շահառուն հանձնում է «Գիտության զարգացման հիմնադրամին»՝ ետ ստանալով իր կատարած վճարումները, իսկ բնակարանը հատկացվում է բնակարանի այդ տեսակի հերթում գտնվող նույն կազմակերպության հաջորդ շահառուին: Այդպիսին չլինելու դեպքում հիմնադրամը ինքն է որոշում բնակարանի հետագա վերաբաշխման հարցը:  
Մնացած պայմանները մանրամասն նշված են շահառուի հետ կնքվող գնման իրավունքի պայմանագրում:
- **Բնակարանների հրապարակային վիճակահանության օրվա և վայրի մասին շահառուներն անհատապես կծանուցվեն:**
- **Հիփոթեքային վարկից օգտվող շահառուներին խնդրում ենք նախապես տեղեկանալ բանկային բոլոր պայմաններին:**